

# ԿԱՊԻՏԱԼ

ԲԻԶՆԵՍ ՕՐԱԹԵՐԹ

Թիվ 222 (266)  
 Դեկտեմբերի 20, 2008թ.

## Ազնիվ և բաց քննարկումը միայն կարող է բերել կոորդինացված և հաշվարկված պլանի մշակմանը

*Սևակ Հովհաննիսյան, փորձագետ, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն*



*2009թ. ՀՆԱ-ի դրական դինամիկայի պահպանումը դժվարագույն մարտահրավերներից մեկը կլինի:*

Հայաստանում արդեն իսկ նկատվում է նախկին տարիներին գրանցված տնտեսական բարձր աճի տեմպի անկում: Այս տարվա հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում գրանցված տնտեսական աճը 3 տոկոսային կետով զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին, իսկ արտահանման աճը գրեթե հավասարվել է զրոյի:

Մենք կարծում ենք, որ տնտեսական աճի տեմպը էականորեն կնվազի 2009թ., և ընդհանրապես ՀՆԱ-ի դրական դինամիկայի պահպանումը դժվարագույն մարտահրավերներից մեկը կլինի: Ճիշտ է, Հայաստանի տնտեսությունը զերծ մնաց համաշխարհային ֆինանսական ճգնաժամից ածանցված իրացվելիության ճգնաժամից՝ շնորհիվ բանկային համակարգի՝ տնտեսության մեջ չափազանց ցածր մասնակցության, պետական պարտքի և բյուջեի պակասուրդի կառավարելիության բարձր աստիճանի, սակայն էական խնդիրներն ի հայտ են գալու իրական հատվածում՝ ի տարբերություն այլ երկրների, որտեղ ճգնաժամն սկիզբ առավ ֆինանսական ոլորտից:

Այսօր Հայաստանի տնտեսության երեք նշանակալի շարժիչ ուժերը լուրջ խնդիրների առջև են կանգնած.

Այսօր Հայաստանի տնտեսության երեք նշանակալի շարժիչ ուժերը լուրջ խնդիրների առջև են կանգնած.

1. Շինարարությունը՝ ՀՆԱ-ում ամենամեծ կշիռ ունեցող տնտեսության ճյուղը, ֆինանսավորման և պահանջարկի պահպանման լուրջ խնդիրների առջև է կանգնած:
2. Մասնավոր փոխանցումները, որոնք ըստ գնահատականների՝ կազմում են ՀՆԱ-ի մոտ 20%-ը, և որի մոտ 80%-ը ձևավորվում է Ռուսաստանում հիմնականում արտագնա աշխատանքի արդյունքում, կարող են էականորեն կրճատվել ճգնաժամի՝ ռուսական տնտեսության վրա կանխատեսվող զգալի ազդեցության հետևանքով:
3. Հանքարդյունաբերությունը և մետալուրգիան, որին բաժին է ընկնում Հայաստանի արտահանման 50%-ից ավելին (չհաշված թանկարժեք քարերն ու մետաղները և դրանցից իրերը), հարկադիր պարապորդում են միջազգային շուկաներում հիմնական մետաղների գների կտրուկ անկման արդյունքում:

Ավելին՝ արժևորված դրամը և համաշխարհային պահանջարկի անկումը հավելյալ ճնշումներ են գործադրում արտահանման կողմնորոշում ունեցող ծառայությունների ոլորտի վրա, ինչպիսիք են

զբոսաշրջությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները: Հաշվի առնելով նաև Հայաստանի տնտեսության մրցունակության ցածր մակարդակը (ցածր արտադրողականությունը, նորարարության և բիզնեսի կատարելագործվածության ցածր մակարդակը)՝ չի բացառվում տնտեսության այլ ոլորտներում ճգնաժամի տարածումը:

Հայաստանի Կառավարության կողմից ներկայացվող հիմնական տնտեսական նախաձեռնություններն առավելապես հեռանկարային բնույթ են կրում, և առաջին օգուտները կարող են ի հայտ գալ մի քանի տարիների ընթացքում: Ինչ վերաբերում է քննարկվող արագ արձագանքման միջոցառումներին (լրացուցիչ վարկային միջոցների ներգրավում, արտոնյալ վարկավորում և նույնիսկ ընկերությունների կապիտալում մասնակցություն), ապա դրանց հաջողության համար անհրաժեշտ է ունենալ հստակ և արդյունավետ կառավարման համակարգ, ինչպես նաև միջամտությունների գնահատման կարողություն: Առանց նման մեխանիզմների՝ զուտ գումարների ներարկումը կարող է բերել ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխման:

Ընդհանրապես, այս երկընտրանքը բոլոր կառավարությունների հակաճգնաժամային գործողությունների հիմնական մարտահրավերն է, և կարծես, դեռևս բոլորը գործում են իրավիճակային արձագանքման ռեժիմում: Կառավարության և մասնավոր հատվածի ազնիվ և բաց քննարկումը միայն կարող է բերել կոորդինացված և հաշվարկված պլանի մշակմանը: